

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության մասին

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով տնտեսական ինտեգրման, արտաքին եւ փոխադարձ առեւտրի զարգացման գործընթացների ապահովման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ու կիրառության գործում փոխադարձ շահերը,

ելնելով այն համոզմունքից, որ Մաքսային միության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական կանոնների ընդունումը կբարձրացնի արտաքին եւ փոխադարձ առեւտրի արդյունավետությունը,

ձգտելով ընդհանուր մոտեցում մշակել Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրում էլեկտրոնային փաստաթղթերի կիրառության հարցում իրավական խոչընդոտների վերացման խնդրի լուծման համար,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համագործակցում են արտաքին եւ փոխադարձ առեւտրում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության հարցերում:

Կողմերը համագործակցում են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրի իրականացումը դյուրացնելու նպատակներով:

Հողված 2

Սույն Համաձայնագրով կարգավորվում են Կողմ հանդիսացող պետությունների պետական մարմինների, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտներ) կողմից էլեկտրոնային փաստաթղթերի կազմման, ուղարկման, փոխանցման, ստացման, պահպանման եւ օգտագործման ընթացքում առաջացող հարաբերությունները՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ժամանակ:

Հողված 3

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետեւյալ հիմնական տերմինները եւ դրանց սահմանումները՝

արտաքին եւ փոխադարձ առեւտրի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթուղթ՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված եւ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրի իրականացման ժամանակ փաստաթղթավորման կանոններին եւ պահանջներին համապատասխանող՝ էլեկտրոնային ձեւով տեղեկության պաշտոնականացված գրանցում (էլեկտրոնային փաստաթուղթ)։

հաշվառման համակարգ՝ էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների իրավահաստատող փաստաթղթերից տեղեկություններ պարունակող տեղեկատվական համակարգ, որի հիման վրա կազմվում կամ տրվում են իրավաբանական նշանակության էլեկտրոնային փաստաթղթեր։

էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածք՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրի իրականացման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերին իրավաբանական ուժ հաղորդելու նպատակով իրականացվող տեղեկատվական–տեխնոլոգիական եւ կազմակերպահրավական միջոցառումների, կանոնների եւ որոշումների ամբողջություն։

վստահված երրորդ կողմ՝ կազմակերպություն, որին Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան, վերապահված է էլեկտրոնային փաստաթղթի կազմողի եւ (կամ) հասցեատիրոջ մասով ժամանակի ֆիքսված պահին էլեկտրոնային փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման գործունեություն իրականացնելու իրավունք:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի կարգավորման առարկա հանդիսացող եւ դրանում չարտացոլված հարցերը կարգավորվում են Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությամբ:

Հոդված 5

Եթե Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն պահանջվում է, որ փաստաթուղթը գրավոր ձեւակերպված լինի, ապա Մաքսային միության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանվող՝ փաստաթղթավորման կանոնների եւ պահանջների համաձայն ձեւակերպված էլեկտրոնային փաստաթուղթը համարվում է այդ պահանջին համապատասխանող:

Եթե Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն պահանջվում է, որ թղթային կրիչով փաստաթուղթը հաստատված լինի կնիքով, ապա Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ փաստաթղթավորման կանոնների եւ պահանջների համաձայն ձեւակերպված էլեկտրոնային փաստաթղթի համար նման հաստատում չի պահանջվում:

Հոդված 6

Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ փաստաթղթավորման կանոնների եւ պահանջների համաձայն ձեւակերպված էլեկտրոնային փաստաթուղթը իրավաբանական ուժով

հավասարազոր է ճանաչվում էլեկտրոնային փաստաթուղթը կազմողի ստորագրությամբ կամ ստորագրությամբ եւ կնիքով հաստատված թղթային կրիչով փաստաթղթի հետ:

Փաստաթուղթը չի կարող զրկվել իրավաբանական ուժից միայն այն հիմքով, որ այն կազմված է էլեկտրոնային փաստաթղթի ձեւով:

Կողմ հանդիսացող պետությունների կողմից էլեկտրոնային փաստաթղթի՝ որպէս իրավաչափության ապացույց, օգտագործումը չի կարող արգելվել դրա էլեկտրոնային տարբերակի պատճառով:

Հոդված 7

Էլեկտրոնային տարբերակով հաշվառման համակարգերի վարման կարգը, ինչպէս նաեւ դրանց օգտագործման առանձնահատկությունները սահմանվում են Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությամբ՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի հիման վրա այդ համակարգերի տեղեկատվական փոխգործակցության ապահովման վերաբերյալ դրույթները:

Հոդված 8

Էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքը բաղկացած է՝

պետական բաղադրիչներից,

ինտեգրացիոն բաղադրիչներից:

Էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն բաղադրիչ է համարվում անդրսահմանային էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը՝ վստահված երրորդ կողմերի փոխգործակցության հիման վրա:

Որպես էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի ինտեգրացիոն բաղադրիչի օպերատոր հանդես է գալիս Հանձնաժողովը:

Որպես էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի պետական բաղադրիչների օպերատորներ հանդես են գալիս Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան լիազորված պետական մարմինները:

Միջոցառումների, կանոնների եւ որոշումների իրականացման գործառույթները կարող են փոխանցվել Հանձնաժողովին՝ Կողմի եւ Հանձնաժողովի միջեւ կնքված համաձայնագրի հիման վրա: Նման համաձայնագրի շրջանակներում պետք է կարգավորվեն ֆինանսավորման եւ տեղեկատվական անվտանգության հարցերը, ինչպես նաեւ կազմակերպա-տեխնիկական ու ընթացակարգային այլ հարցեր:

Էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի ստեղծման, շահագործման եւ արդիականացման ֆինանսավորման ծավալներն ու աղբյուրները սահմանվում են Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի համալիր տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության եւ զարգացման ֆինանսավորման ընդհանուր ծավալների ու աղբյուրների շրջանակներում՝ «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի համալիր տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության եւ զարգացման մասին» 2010 թվականի սեպտեմբերի 21-ի համաձայնագրին համապատասխան:

Հոդված 9

Հանձնաժողովին կից ստեղծվում է Համակարգման խորհուրդ, որն իր գործունեությունը կազմակերպում է Եվրասիական տնտեսական համայնքի՝ պետության ղեկավարների մակարդակով միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) կողմից հաստատվող՝ Համակարգող խորհրդի մասին կանոնակարգին եւ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ Համակարգման խորհրդի աշխատակարգին համապատասխան:

Համակարգման խորհրդի հիմնական խնդիրներն են՝

հաշվառման համակարգերի եւ էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի տեղեկատվական անվտանգության նպատակով որոշումների մշակումը.

էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի բաղադրիչների կազմի մշակումը՝ Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների միջպետական ստանդարտների, միջազգային ստանդարտների եւ առաջարկությունների հիման վրա,

տեղեկատվական-տեխնոլոգիական որոշումների եւ ծրագրա-ապարատային համալիրների մշակման ու ապրոբացիայի համակարգումը՝ էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի շրջանակներում,

էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման կանոնների մշակման, էլեկտրոնային տարբերակով տեղեկությունների փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի առանձին բաղադրիչների եւ ծառայությունների աշխատանքի անվտանգության ու աշխատակարգերի, ինչպես նաեւ էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների համար դրանց կիրառման վերաբերյալ առաջարկությունների մշակման համակարգումը,

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտաքին եւ փոխադարձ առեւտրում էլեկտրոնային փաստաթղթերի կիրառության դեպքում Կողմ հանդիսացող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության ներդաշնակեցման, ինչպես նաեւ հաշվառման համակարգերի միջեւ տեղեկատվական փոխգործակցության միջերեսների միասնականացման համար առաջարկությունների մշակումը:

Համակարգման խորհրդի անդամները Կողմ հանդիսացող պետությունների եւ Հանձնաժողովի քարտուղարության լիազոր ներկայացուցիչներն են: Համակարգման խորհրդի շրջանակներում աշխատելու նպատակով կարող են ներգրավվել Կողմ հանդիսացող պետությունների մասնագետներ եւ փորձագետներ:

Համակարգման խորհրդի անդամների, ինչպես նաեւ Համակարգման խորհրդի աշխատանքներին մասնակցելու նպատակով ներգրավվող՝ Կողմ հանդիսացող պետությունների մասնագետների եւ փորձագետների գործուղման ծախսերի ֆինանսավորումն

իրականացվում է Կողմ հանդիսացող պետությունների՝ ուղարկող պետական մարմինների կողմից:

Համակարգման խորհրդի նիստերն անցկացվում են Հանձնաժողովի քարտուղարությունում:

Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման համար անհրաժեշտ գիտահետազոտական եւ փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքներն ապահովվում են Հանձնաժողովի կողմից:

Հոդված 10

Էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների նկատմամբ վստահված երրորդ կողմերի ծառայությունների գործունեությունն իրականացվում է սույն Համաձայնագրի պահանջներին եւ Կողմ հանդիսացող այն պետության օրենսդրությանը համապատասխան, որի իրավազորության տակ է գտնվում վստահված երրորդ կողմը:

Վստահված երրորդ կողմը՝

իրականացնում է էլեկտրոնային փաստաթղթերի օրինականացումը (իսկության հաստատումը),

ապահովում է էլեկտրոնային փաստաթղթերի միջազգային (անդրսահմանային) փոխանակման ժամանակ վստահության երաշխիքները,

ապահովում է ելից եւ (կամ) մտից էլեկտրոնային փաստաթղթերում եւ հաղորդագրություններում էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման իրավաչափությունը՝ այն պետության օրենսդրության կանոններին եւ պահանջներին համապատասխան, որտեղ գտնվում է վստահված երրորդ կողմը:

Վստահված երրորդ կողմերը փոխգործակցում են Կողմ հանդիսացող պետությունների՝ էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանության տարբեր մեխանիզմներ կիրառող էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների միջեւ անդրսահմանային էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպման ժամանակ վստահության ձեւավորման համար:

Կողմերն ապահովում են էլեկտրոնային փոխգործակցության սուբյեկտների՝ վստահված երրորդ կողմերի ծառայություններից օգտվելու իրավունքը, որոնց գործառույթներն իրականացնում են Կողմ հանդիսացող պետությունների պետական մարմինները կամ նրանց կողմից հավատարմագրված կազմակերպությունները:

Հոդված 11

Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով:

Եթե վեճի կողմերը խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի կողմերից մեկից վեճի մյուս կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքը ներկայացնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում, ապա վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ վեճի կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը հանձնել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 12

Կողմերի համաձայնությամբ, սույն Համաձայնագրում կարող են կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 13

Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման եւ ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմ հանդիսացող պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի սեպտեմբերի 21-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից

Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից